ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՂՐՂԶՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մարտի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ղրղզստանի խորհրդարանի ժողովրդական ներկայացուցիչների ժողովի նախագահ Ալմամբեդ Մատուբրահիմովի գլխավորած պատվիրակությունը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանի ուղեկցությամբ:

Վեհարանի ընդունելությունների սրահում հյուրերին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, պրն. Մատուբրահիմովն իր խորին հարգանքն ու ակնածանքն արտահայտեց հայ ժողովրդի դարավոր մշակույթի, նրա հոգեւոր կենտրոն Ս. Էջմիածնի նկատմամբ:

Ջերմ զրույցի ընթացքում մեծահարգ հյուրը Վեհափառ Հայրապետին ամփոփ տեղեկություններ տվեց երկու խորհրդարանների միջեւ կնքված համագործակցության պայմանագրի եւ առաջիկայում կայանալիք Հայաստանի ու Ղրղզստանի նախագահների հանդիպման մասին:

Իր խոսքում Նորին Սրբությունը նշեց, որ երկու ժողովուրդներն էլ գտնվում են անցումային դժվարին փուլում եւ միասնաբար, եկեղեցու աջակցությամբ պետք է հաղթահարվեն այդ դժվարությունները: Վեհափառ Հայրապետը ընդգծեց նաեւ Եկեղեցու՝ ժողովուրդների խաղաղությանն ուղղված ջանքերը՝ վերհիշելով 1994 թ. հունիսին Մոսկվայում Ալեքսիյ Բ Պատրիարքի եւ շեյխ ուլ իսլամ Փաշա Զադեի հետ ստորագրված միասնական Հայտարարությունը, որտեղ շեշտվում էր այն միտքը, որ պատերազմները երբեք չպետք է կրեն կրոնական բնույթ, իսկ ժողովուրդների միջեւ առաջացած խնդիրները բացառապես պետք է լուծվեն խաղաղ, բանակցային ճանապարհներով:

Ապա Նորին Սրբությունը հյուրերի խնդրանքով տեղեկություններ տվեց Հայ Եկեղեցու, Մայր Աթոռի կառուցվածքի եւ կրթական համակարգի վերաբերյալ:

Հանդիպումից հետո հյուրերը Վեհափառ Հայրապետի ուղեկցությամբ շրջեցին Վեհարանի սրահներում եւ հետաքրքրությամբ ծանոթացան մեր ազգային մշակույթի մասունքներին:

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Մարտի 8-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Հարավային Ռուսաստանի Նորաստեղծ թեմական խորհրդի անդամներին՝ թեմական առաջնորդ Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյանի գլխավորությամբ: